ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի
2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի
N 12 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանն առաջարկվող՝ **«ՀՀ պարենային անվտանգության ապահովման ռիսկերն ու դրանց նվազեցման հիմնական ուղիները» խորագրով հետազոտական թեման հաստատելու** մասին հարցը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը «Ամբերդ» հետազոտական կենտրոնին առաջարկություն է ներկայացրել ուսումնասիրել ՀՀ պարենային անվտանգության ապահովման ռիսկերն ու դրանց նվազեցման հիմնական ուղիները: Հետազոտական թեման քննարկվել և հաստատվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 14-ի նիստում (արձանագրություն N 6):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի նիստի որոշումը՝ **հաստատել** «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանն առաջարկվող՝ **«ՀՀ պարենային անվտանգության ապահովման ռիսկերն ու դրանց նվազեցման հիմնական ուղիները» խորագրով հետազոտական թեման**:

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա.Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Գևորգյան**

2024 թ. հունիսի 24
Երևան